315 Ահա ցուրտ ձմեռն է անցել,

1. Ահա ցուրտ ձմեռն է անցել,
Անձրևն է անհետացել,
Եկեղեցում գարնանային
Գեղեցիկ վարդեր են բացվել:
Զեփյուռը զով տաղ է երգում,
Երջանիկ հույս է ներշնչում,
Հիսո՛ւս, շուտով ե՛կ, անհամբեր
Քեզ ենք կանչում: (2)

Ո՛վ Հիսուս Փրկիչ, շուտով ե՛կ,
Մենք Քեզ անչափ կարոտել ենք,
Մեզ տար երկինք՝ Քո խնջույքին,
Վայելենք սերդ երկնային:

2. Ահա եկեղեցին ծաղկել,
Սուրբ Հոգովդ է զարդարվել,
Սիրահարված է Քո սիրով,
Երգում է քաղցր տաղերով.
«Ո՛վ Տեր, ե՛կ շուտ կանաչ այգիդ,
Քաղի՛ր Քո վարդ եկեղեցին,
Զատի՛ր աշխարհի փշերից,
Որ հավետ երգենք Քեզ, Տե՛ր իմ»:

3. Կարոտով ենք Քեզ սպասում՝
Սուրբ Հայրենիք տանես Դու մեզ,
Հափշտակվենք ամպերով մենք,
Ապրենք Քեզ հետ դարեր անվերջ:
Գովենք սրբոց հետ երգերով,
Քնարներով, տավիղներով.
«Դու ես միայն Տեր, Թագավոր,
Սուրբ ես, սուրբ ես, Տեր փառավոր»: